

«ՆԵՐՔԻՆ ԴԻՏՈՒՄ» ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ
Լազարյան Ա. Ա.

Ներկայացվող հոդվածը վերաբերում է «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման առանձնահատկություններին քրեակատարողական հիմնարկներում: Թեև մեկ հոդվածում անհնար է մասնամասն վերլուծել և ներկայացնել առկա համակարգային, օրենսդրական և տեսական խնդիրները, սակայն հեղինակի կողմից փորձ է արվել հնարավորինս ամփոփ և հակիճ ներկայացնել դրանց մի մասը:

Բանալի բառեր. քրեակատարողական հիմնարկ, դատապարտյալ, հանցագործություն, օպերատիվ-հետախուզական միջոցառում, ներքին դիտում:

Քրեակատարողական համակարգի բարեփոխումների արդի փուլում, երբ առավելապես բարձր են գնահատվում և կարևորվում մարդու հիմնական իրավունքները, խնդրահարույց են մնում հանցագործությունների բացահայտման և կանխարգելման խնդիրը և որպես դրա գործուն միջոց՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների (**այսուհետ նան՝ ՕՀՄ**) իրականացումը, իսկ դրա ավելի խնդրահարույց մասն է համարվում քրեակատարողական հիմնարկներում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը: Ինչպես օպերատիվ-հետախուզական գործունեության (**այսուհետ նան՝ ՕՀԳ**), այնպես էլ քրեակատարողական ծառայության ոլորտը կարգավորող իրավական ակտերը միայն նախատեսում են քրեակատարողական հիմնարկներում ՕՀՄ իրականացման

հնարավորությունը՝ ոչ մի ձևով չհատակեցնելով դրանց կատարման առանձնահատկությունները [1]:

Չնայած այն հանգամանքին, որ օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկությունները կանոնակարգվում են մեկ իրավական ակտով (ՕՀԳ մասին օրենք), այնուամենայնիվ գործունեության այս տեսակի իրականացումը պետական կառավարման համակարգի տարբեր մարմիններում, պայմանավորված այդ մարմինների խնդիրներով և գործառույթային առանձնահատկություններով, հետապնդում է տարբեր նպատակներ և իրենից ենթադրում է տարաբնույթ առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ կառավարչական, հոգեբանական և այլն: Դրանցից կարելի է առանձնացնել նաև մի շարք սամանադրաիրավական առանձնահատկություններ, որոնք բնորոշ են միայն քրեակատարողական հիմնարկներում անցկացվող ՕՀՄ-ներին: Մասնավորապես այն, որ քրեակատարողական հիմնարկներում ՕՀՄ անցկացվում է այն անձանց շրջանակի նկատմամբ, ում իրավունքները և սահմանադրաիրավական կարգավիճակը արդեն իսկ սահմանափակված է [2]:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում **(այսուհետ նաև՝ ՀՀ ԱՆ ՔԿՀ)** կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում քաղաքացիների, կալանավորված անձանց և դատապարտյալի կողմից կատարված հանցագործությունների դեպքերը զգալիորեն աճել են, մասնավորապես՝ 2019 թվականին ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում քաղաքացիների, կալանավորված անձանց և դատապարտյալի կողմից կատարված հանցագործությունների դեպքերով հարուցվել է 101 քրեական գործ, որոնց մեծ մասը՝ մոտ 70%, **Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով: Իսկ ահա արդեն 2020 թվականին ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում քաղաքացիների, կալանավորված անձանց և դատապարտյալի կողմից կատարված հանցագործությունների դեպքերով հարուցվել է 128 քրեական գործ, որոնց մեծ մասը՝ մոտ 80%, կրկին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով: 2021 թվականի առաջին կիսամյակում ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում քաղաքացիների, կալանավորված անձանց և դատապարտյալի կողմից կատարված հանցագործությունների դեպքերով հարուցվել է 49 քրեական գործ, որոնց մեծ մասը՝ 90%, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով:**

Ըստ այդմ՝ կարող ենք հստակ արձանագրել, որ ներկայումս քրեակատարողական համակարգի առջև ծառայած խնդիրներից են կանոնակարգի, իրավակարգի և օրինականության պահպանումը քրեական պատիժ կատարող հիմնարկներում, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց, այդ հիմնարկների անձնակազմերի (ծառայողների, աշխատակիցների) և այնտեղ գտնվող այլ անձանց անվտանգությունն ապահովելը, ինչպես նաև նոր հացագործությունների կատարումը կանխարգելելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՔԿՀ-ներում գրանցվում է հանցավորության աճ, ընդ որում՝ կատարված հանցագործությունների մեծամասնությունը կապված է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ, որը իրենից ենթադրում է նաև այլ անձանց ներգրավում հանցագործության կատարմանը, անհերքելի է մնում օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման կարևորությունը: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը որպես պետական համակարգի մարմինների կողմից իրականացվող գործունեության հատուկ տեսակ, պետք է համապատասխանի մի շարք չափանիշների, մասնավորապես՝ գաղտնիություն, հնարավորինս թաքցված և քողարկված գործունեություն, ինչպես նաև հատուկ մասնագիտացվածություն և կազմակերպվածություն: Այդ ամենի հետ մեկտեղ՝ քրեակատարողական հիմնարկներում ՕՀՄ-ների անցկացումն ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են ինչպես քրեակատարողական համակարգը կանոնակարգող և օպերատիվ-հետախուզական գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերով, այնպես էլ հատուկ ռեժիմային գոտում (ինչպիսին հանդիսանում է ՔԿՀ տարածքը) իրականացվելու հանգամանքով: Մասնավորապես, **«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի** [3] **(այսուհետ՝ Օրենք)** 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 8-րդ կետերի **համաձայն**՝ օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներից են ինչպես հիմնարկների բնականոն գործունեության ապահովումը և հիմնարկներում նախապատրաստվող հանցագործությունների նախագգուշացումը, կանխումը և բացահայտումը, այնպես էլ հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը, հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը, ինչպես նաև վկաների,

հանցագործության հետքերի, առարկաների, իրեղեն ապացույցների և այլ իրերի, փաստաթղթերի հայտնաբերումը:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ քրեակատարողական ծառայությունը ևս հանդիսանում է ՕՀԳ իրականացնող մարմին:

Թեև առաջին հայացքից իրավակարգավորումների մասով քրեակատարողական ծառայությունը և քրեակատարողական հիմնարկը հանդիսանում են ՕՀԳ իրականացնող մարմիններ և օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում կարող են անցկացնել ՕՀՄ, սակայն կարծում ենք, որ մի շարք ՕՀՄ-ներ քրեակատարողական հիմնարկներում անցկացնելու մասով առկա է օրենսդրական բաց, որը կարող է գործնական կիրառության ընթացքում տարատեսակ մեկնաբանությունների տեղիք տալ և հանդիսանալ լրջագույն խնդիր: Այդպիսին է հանդիսանում, օրինակ, «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու վերաբերյալ իրավակարգավորումը, մասնավորապես՝ Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՕՀՄ-ների տեսակներից մեկն է **«Ներքին դիտում»-ը**, որը, Օրենքի համաձայն, **բնակարանում** հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:

Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը իր հերթին սահմանում է, որ ՕՀԳ օրենքի իմաստով «բնակարան» հասկացությունը օգտագործվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ մասի վերլուծությունից հստակ է դառնում, որ քրեակատարողական հիմնարկի տարածքը ոչ մի կերպ չի կարող համարվել և դիտարկվել «բնակարանի» քրեադատավարական հասկացության մեջ: Այսինքն՝ ՕՀԳ մասին օրենքը, հղում կատարելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին, փաստացի չի նախատեսում այն դեպքերը, երբ անհրաժեշտություն է առաջանում «Ներքին դիտում» ՕՀԳ-ն անցկացնել քրեակատարողական հիմնարկի տարածքում, որը իր տեսակով հանդիսանում է հատուկ ռեժիմային գոտի, և որի տարածքը

գուտ քրեադատավարական իմաստով չի կարող դիտվել որպես «բնակարան»:

Հետխորհրդային որոշ երկրներում (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսի Հանրապետություն) «Ներքին դիտում» և «Արտաքին դիտում» ՕՀՄ-ները առանձնացված չեն և միացված են մեկ՝ «Դիտարկում» (наблюдение) ՕՀՄ ներքո: Դիտարկումը օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրների լուծման համար նշանակություն ունեցող երևույթների, գործունեության, իրադարձությունների և գործընթացների տեսողական կամ այլ կերպ ընկալումը և ամրագրումն է [4]: Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի 21.08.2008թ.-ի № 862-Օ-Օ որոշման համաձայն՝ դիտարկումը անձի վարքագծի նկատմամբ տեսողական, էլեկտրոնային կամ այլ եղանակով համալիր հսկողություն է, որը ուղղված է նրա հանցավոր գործունեության մասին տվյալների ստացմանը կամ ՕՀԳ այլ խնդիրների լուծման նպատակով տեղեկատվության ստացմանը [5]:

Հացագործությունների բացահայտումը՝ որպես ՕՀԳ իրականացնող մարմինների հիմնական խնդիր, Ա. Ե. Չեչետինի կարծիքով՝ իր մեջ ներառում է երեք բաղադրատարրեր՝ հանցագործություն կատարած անձանց բացահայտելը, նրանց արարքում հանցակազմի տարրերի հայտնաբերումը և հանցագործությունից տուժած անձանց հայտնաբերումը [6]: Նշված ձևակերպմանը համաձայն լինելով, այնուամենայնիվ, Ա. Պ. Իսիչենկոն հավելում է՝ ՕՀԳ նպատակը չի կարող հանդիանալ միայն արդեն իսկ կատարված հանցագործությունների բացահայտումը, այլ նաև հանցագործությունների նախապատրաստումը հայտնաբերելը և կանխարգելելը [7]:

Համաձայն լինելով երկու գիտնականների արտահայտած կարծիքին, այնուամենայնիվ, կրկին անհրաժեշտ ենք համարում նշել, որ քրեակատարողական հիմնարկներում ՕՀՄ անցկացնելը պետք է ունենա իր՝ օրենսդրությամբ սահմանված առանձնահատուկ երաշխիքները, քանի որ ՕՀԳ մասին օրենքով, օրինակ, փաստացի հնարավորություն է տրվում կատարել «Ներքին դիտում» ՕՀՄ նաև քրեակատարողական հիմնարկներում, սակայն, կարծում ենք, որ տեղին կլիներ քրեակատարողական հիմնարկում գտնվող անձանց մասով նախատեսել բացառություն կամ այլ կարգավորում, քանի որ քրեակատարողական հիմնարկում անձի գտնվելու օրինական հիմքը, նրա նկատմամբ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշումն է կամ դատարանի օրինական

ուժի մեջ մտած դատավճիռը, որով անձը դատապարտվել է ազատությունից զրկվելու հետ կապված պատժի: Նշված երկու իրավիճակներում էլ անձը ունի իր կարգավիճակից բխող մի շարք իրավունքներ և պարտականություններ: Մասնավորապես, Եվրոպական կոնվենցիայի [8] 8-րդ հոդվածի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշակի նախադեպային դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ խոսակցությունների կամ պատկերների տեսաձայնային ամրագրման սարքերի միջոցով գաղտնալսումն ընկնում է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի գործողության ներքո նաև այն դեպքում, երբ անձին գաղտնի վերահսկել են ազատությունից զրկվելու վայրերում(...): Այցելությունների համար նախատեսված սենյակում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից խոսակցությունների գաղտնալսման առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ **անվտանգության ապահովման նկատառումներով դա միանգամայն իրավաչափ է**, սակայն այլ նպատակով խոսակցությունների պարբերաբար ձայնագրումը **հակասում է այցելության համար նախատեսված սենյակների հիմնական նշանակությանը**, այն է՝ ապահովել կալանավորված անձի և ազգականի մասնավոր կյանքը, որը ներառում է մերձավորի հետ հարաբերություններում արված հայտարարությունների գաղտնիությունը: Ուստի քրեակատարողական հիմնարկի՝ այցելությունների համար նախատեսված սենյակում տեղի ունեցած խոսակցությունները կարող են ներառվել «մասնավոր կյանք» և «նամակագրություն» հասկացությունների մեջ [9]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գնահատմամբ՝ մինչդատական կալանքի տակ գտնվող անձինք, որոնք առաջին տեսակցության հնարավորություն են ստանում իրենց մերձավորների հետ, **կարող են ակնկալել որոշակի գաղտնիություն**, որը ներառում է հաղորդակցության ազատության որոշակի աստիճան, և չեն կարող ենթադրել, որ իրենց խոսակցությունները այցելության համար նախատեսված սենյակում կարող են ձայնագրվել **ապացույցներ հավաքելու նպատակով**: Նշված հանգամանքներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, այցելությունների համար նախատեսված սենյակում խոսակցությունների ձայնագրումը և դրանց հետագա օգտագործումը դիտարկելով որպես անձնական կյանքին միջամտություն, գտել է, որ այս դեպքում պետք է գնահատել, թե արդյոք

միջամտությունն արդարացված է եղել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի լույսի ներքո, այն է՝ արդյոք միջամտությունը նախատեսված է եղել օրենքով, հետապնդել է իրավաչափ նպատակ և անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում՝ այդ նպատակին հասնելու համար [10]:

Այսինքն՝ անձինք, որոնք գտնվում են քրեակատարողական հիմնարկի հատուկ ռեժիմային գոտու տարածքում, կարող են ունենալ ողջամիտ ակնկալիք իրենց մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի վերաբերյալ: Նման պայմաններում, գտնում ենք, որ նրանց նկատմամբ տեղի է ունենում մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի սահմանափակում և այս մասով «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակում՝ որևէ խախտում:

Եզրակացություն: Սույն հոդվածում հեղինակի կողմից վերլուծվեց և փորձ արվեց ներկայացնել «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակում «բնակարան» քրեադատավարական հասկացության ոչ իրավաչափ օգտագործման վերաբերյալ տեսակետը, ինչպես նաև հիմնավորել, որ Եվրոպական կոնվենցիայի իմաստով «Ներքին դիտում» ՕՀՄ անցկացումը կարող է դիտարկվել որպես անձի մասնավոր կյանքի գաղտնիության, ինչպես նաև մեղադրյալի (ամբաստանյալի, դատապարտյալի) լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքների խախտում, ինչպես նաև հանգեցնել ՕՀՄ իրականացման արդյունքում ձեռք բերված ապացույցի անթույլատրելիության: Կատարված հետազոտության ընթացքում հեղինակի կողմից ուսումնասիրվել է նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի (ընդունվել է 30.06.2021թ.-ին ՀՀ ԱԺ կողմից) համապատասխան կարգավորումները, որոնցով թեև որոշ ՕՀՄ-ների իրականացումը արդեն կարգավորվելու են քրեադատավարական օրենսդրությամբ, սակայն սույն վերլուծությամբ բարձրացված տեսական և գործնական հիմնախնդիրներին կրկին լուծում չի տրվել: Այսպիսով, կարծում ենք, որ ՕՀՄ-ն չի կարող ծառայեցվել մեղադրանքի հիմնավորման համար ապացույցների հավաքմանը կամ քրեական գործով նախաքննության լրիվության, օբյեկտիվության և բազմակողմանիությունն ապահովելուն: Հարուցված քրեական գործով ՕՀՄ-ն կրում է զուտ օժանդակ բնույթ և ստեղծում է համապատասխան փաստական հիմքեր այս կամ այն քննչական կամ դատավարական գործողությունը կատարելու համար

[11]: Կատարված հետազոտության արդյունքներով հեղինակը առաջարկում է կամ առհասարակ բացառել քրեակատարողական հիմնարկներում «Ներքին դիտում» ՕՀՄ անցկացումը (եղնելով անձի լռելու և այլ սահմանադրական իրավունքներից), կամ քրեակատարողական հիմնարկներում իրականացվող ՕՀՄ-ների՝ մասնավորապես «Ներքին դիտում» ՕՀՄ մասով նախատեսել այլ կարգավորումներ, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի 246-րդ հոդվածը վերաձևակերպել հետևյալ բովանդակությամբ. «Ներքին դիտումը հատուկ կամ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին բնակարանում (բացառությամբ քրեակատարողական հիմնարկների կամ այլ ռեժիմային գոտիների) հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքը վերահսկելն է՝ տեսաձայնագրման, տեսագրման, ձայնագրման կամ լուսանկարման միջոցով, կամ առանց դրանց՝ էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա դիտման արդյունքների ամրագրմամբ»:

**ОСОБЕННОСТИ ПРОВЕДЕНИЯ ВНУТРЕННЕГО НАБЛЮДЕНИЯ, КАК
ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОГО МЕРОПРИЯТИЯ В УГОЛОВНО-
ИСПРАВИТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ И ЕГО СООТВЕТСТВИЕ
МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫМ СТАНДАРТАМ**

Лазарян А. А.

Представленная статья об особенностях внутреннего наблюдения как оперативно-розыскном мероприятии в уголовно-исправительных учреждениях. Исходя из того, что в рамках одной статьи сложно проанализировать все системные, законодательные и теоретические проблемы, связанные с этой темой, мы ограничимся рассмотрением только тех задач, которые в современных условиях функционирования уголовно-исправительной системы представляются особо актуальными.

Ключевые слова: уголовно-исправительное учреждение, осужденный, преступление, оперативно-розыскное мероприятие, внутреннее наблюдение.

THE PECULIARITIES OF THE "INTERNAL OBSERVATION" OPERATIVE-INTELLIGENCE MEASURES IN THE PENITENTIARY INSTITUTIONS AND THEIR ACCORDANCE TO THE INTERNATIONAL LEGAL CRITERIAS

Lazaryan A. A.

The article refers to the peculiarities of the implementation of the "Internal observation" operative-intelligence measures in penitentiary institutions. While it is impossible to analyze in detail and to introduce the existing systematic, legislative and theoretical problems, the author has attempted to present some of them as concisely as possible.

Keywords: penitentiary institution, convict, crime, operative-intelligence measure, internal observation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гнедова Н. П. "Некоторые аспекты совершенствования правового обеспечения оперативно-розыскной деятельности в исправительных 188 учреждениях" <https://cyberleninka.ru/article/n/nekotorye-aspekty-sovershenstvovaniya-pravovogo-obespecheniya-operativno-rozysknoy-deyatelnosti-v-ispravitelnyh-uchrezhdeniyah/viewer> (24.02.2022)
2. Дугенец А. С. "Конституционно-правовые аспекты оперативно-розыскной деятельности в исправительных учреждениях" <https://cyberleninka.ru/article/n/konstitutsionno-pravovye-aspekty-operativno-rozysknoy-deyatelnosti-v-ispravitelnyh-uchrezhdeniyah> (24.02.2022)
3. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենք, 2007թ.
4. Баженов С. В., Бакланов Л. А., Васильченко Д. А., Гусев В. А., Десятов М. С., Зенькин Д. В., Луговик В. Ф., Лугович С. М., Малахов А. С., Невский Е. П., Серов А. В., Чечетин А. Е. "Оперативно-розыскная деятельность органов внутренних дел. Общая часть," Электронное учебное издание., <https://ordrf.ru/uchebnik/page98.html>(24.02.2022)
5. Определение Конституционного Суда РФ, "Об отказе в принятии к рассмотрению жалобы гражданина Камалиева Марата Дамировича на нарушение его конституционных прав статьей 6 Федерального закона "Об оперативно-розыскной деятельности"" 21 октября 2008 г., <https://ordrf.ru/uchebnik/page166.html> (24.02.2022)

6. Вагин И. А., Комметарий О. А. к Федеральному закону "Об оперативно-разыскной деятельности". Москва, 2009, с. 23.
7. Исиченко А. П. «Оперативно-розыскная деятельность в исправительных учреждениях». Научная электронная библиотека «КиберЛенинка», 2012, <https://cyberleninka.ru/article/n/operativno-rozysknaya-deyatelnost-v-ispravitelnyh-uchrezhdeniyah-kommentariy-k-statie-84-uik-rf/viewer> (25.09.2021)
8. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ կոնվենցիա, 1950:
9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Wisse c. France գործով, ք. 29-րդ կետը: 2005 թվականի դեկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 71611/01:
10. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Wisse c. France վճիռը, ք. 30-31-րդ կետերը:
11. Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քրեական դատարանի 15.12.2020թ.-ի թիվ ԵԴ-1 27/27.11.2019 որոշում:
12. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, 2021թ.:

Տեղեկություններ հեղինակի մասին

Լազարյան Ա. Ա. – հայցորդ,

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

դասախոս, ՀՀ Ոստիկանության կրթահամալիր

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի իրավաբանական բաժին

Էլ. փոստ՝ Lazaryan.arpi@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 19.09.2021

Գրախոսվել է՝ 26.02.2022